Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԱՌ ՆԱԽԴԻՐԸ ՊՐՈՖ. ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ «ԳՐԱԲԱՐԻ ԿԱՊԵՐԸ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քերականներից բացի՝ գրաբարի կապերի կապակցելիության հնարավորությունների քննությամբ զբաղվել են նաև անցյալ դարի հայ լեզվաբաններից Մ.Աբեղյանը[1], Հր. Աճառյանը[2], Ա.Աբրահամյանը[3], Հ. Ավետիսյանն ու Ռ. Ղազարյանը[4] և ուրիշներ: Բնավ նպատակ չունենալով ինչ-որ չափով նսեմացնելու նրանցից որևէ մեկի դերն այս հարցում՝ նշենք, որ, այստահանդերձ, գրաբարի կապերը կարիք ունեն ավարտուն ու ամբողջական ուսումնասիրության: Այս կարևոր խնդրին է նվիրված հայ լեզվաբանության երախտավորներից մեկի՝ պրոֆ. Վարագ Առաքելյանի «Գրաբարի կապերը» տակավին անտիպ հսկայածավալ (20 մամուլ) աշխատությունը[5]: Իբրև նրա հրատեմի ասպիրանտ՝ այս ձևով մեծ գիտնականի հիշատակին մեր երախտիքի տուրքն ենք բերում՝ միաժամանակ հույս տածելով գտնելու հովանավոր՝ նշված արժեքավոր աշխատանքն ամբողջությամբ տպագրելու համար:

Բ. գ. դ.. Գ. Կ. Խաչատրյան

Այս հոդվածը նշված անտիպ աշխատությունից մի հատված է գրաբարի նախդիրներից մեկի՝ առ նախդրի կապակցելիության բոլոր դրսևորումների և հանդես բերած շարահյուսական գործառույթների մասին՝ մեր կողմից կատարված մասնակի լրացումներով, փոփոխություններով ու ծանոթագրություններով:

Գրաբարում *առ* նախդիրն աչքի է ընկնում կապակցելիության մեծ հնարավորություններով. նրա հետ հանդես եկող կապվող բառածևը կարող է արտահայտվել բոլոր թեք հոլովներով: Անշուշտ, պետք է նշել, որ տարբեր հոլովների հետ *առ* նախդիրը հանդես է բերում ոչ միայն կապակցման տարբեր աստիճանի հաճախականություն, այլև քերականական տարբեր իմաստներ: Այսպես՝ մեր հաշվարկներով գրաբարում *առ* նախդիրն ավելի հաճախ կապակցվում է հայցական հոլովի հետ, և ընդհակառակը, այդ նախդիրը սեռական հոլովի հետ հանդես է բերում թե՛ գործառական և թե՛ քերականական իմաստների արտահայտման նկատելի սահմանափակություն և այլն:

1. «*Առ նախդիր+սեռական հոլովով կապվող բառածև*» մասնակաղապարը կարող է արտահայտել՝

1.1. *պատճառի պարագայի* քերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառածևի դերով կարող են հանդես գալ վերացական գոյականներ, որոնք հիմնականում ցույց են տալիս անձի ֆիզիկական, հոգեկան կամ այլ վիճակ, ինչպես՝ *ահ, աղքատութիւն, ամբարտավանութիւն, ամօթ, անհնարութիւն, անմտութիւն, առատութիւն, բարեբարութիւն, գազանութիւն, գեղեցկութիւն, դառնութիւն, երկիւղ, երկիւղածութիւն, յարձակումն, նախանձ, վիշտ, վտանգ, տկարութիւն, ցասումն, ցանկութիւն* և այլն: Օրինակ՝ *Առ* նախանձու մատնեցին զնա (Մարկ., ԶԵ, 10): Եւ *առ երկիւղի* և *ամօթոյ* մարդկան յայտնիցեն և կործանեսցին (Առակ.,ԻԹ,25): Արկանէր զնոսա *առ ցասման* ի գևհեն (Եզնիկ, 246):

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ նշված կիրառության մեջ *առ* նախդրի հետ կապվող բառածևն արտահայտված է ոչ թե սեռական, այլ տրական հոլովով[6]: Մինչդեռ Հր. Աճառյանն, օրինակ, հակառակն է կարծում և *առ* նախդրի ու տրականի կապակցության բաժնում նշում է միայն այդ կապակցության տեղի պարագայական իմաստի մասին[7]: Իրականում լեզվական փաստերը ցույց են տալիս, որ *առ* նախդիրը պատճառահետևանքային իմաստ կարող է արտահայտել թե՛ սեռական և թե՛ տրական հոլովների հետ: Ասվածի լավագույն վկայություններն այն նախադասություններն են, որոն-

---

[1] *Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Եր., 1936, էջ 169-194:*

[2] *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի...., հ. V, Եր., 1965, էջ 60-190:*

[3] *Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 227-260:*

[4] *Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1975, էջ 214-235:*

[5] *Սրանից բացի՝ պրոֆ. Վարագ Առաքելյանն ունի ևս շուրջ քսան անտիպ գործեր, որոնք նույնպես հայագիտության բնագավառում մեծ կարևորություն են ներկայացնում և արժանի են շուտափույթ տպագրության:*

[6] *Տե՛ս, օրինակ, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 229; Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 215; Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 182-183:*

[7] *Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 86:*

ցում կապվող բառածև ինքը լրացյալ է. և տարբեր կիրառությունների մեջ ունի իրարից ձևաբանորեն տարբեր լրացումներ՝ արտահայտված մի դեպքում սեռական, մյուս դեպքում՝ տրական հոլովով:Հմմտ. «Չի իմ առ բարերարութեան իմոյ արծակեալ լիցի զքեզ» (Բուզ., 148) և «Իսկ նա....զանձն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում» (Բուզ.,59) նախադասությունները, որոնցից առաջինի մեջ սեռականով արտահայտված *իմոյ* անդամը վկայում է կապվող բառածևի սեռական հոլովով, իսկ երկրորդի մեջ տրականով արտահայտված *իւրում* անդամը՝ կապվող բառածևի տրական հոլովով դրված լինելու մասին: Այնպես որ, եթե այս կապակցությունները կիրառվում են քերականորեն համանուն սեռական-տրական հոլովներով արտահայտված հատկացուցչի հետ [*Առ* ճեպ տագնապի *ստիպելոյ* դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զալարանոցս երանելոյն (Եղիշէ, 178)] և կամ էլ առանց հատկացուցչի [Եւ *առ* յոյժ յանդուգն *յարձակմանն* յոլովագոյն այն էր, զոր գետամոյնս առնէին, քան զանկեալսն սրոյ ի ցամաքի (Եղիշէ, 77)], ապա կապվող բառածևը հավասարապես կարող է արտահայտված լինել կա՛մ սեռական, կա՛մ էլ տրական հոլովով:

1.2. Մակավ դեպքերում «*առ* նախդիր+սեռական հոլովով կապվող բառածև» մասնակաղապարով կարող է արտահայտվել նաև *հիմունքի պարագայական* իմաստ. Եւ *առ* վայրենի *բարուցն* իւրոց՝....ութ հարիւր այր ետ ածել առաջի նորա (Բուզ., 21): Չի իմ, *առ բարերարութեան* իմոյ, արձակեալ լիցի զքեզ (Բուզ., 203):

2. «*Առ նախդիր+տրական հոլովով կապվող բառածև*» մասնակաղապարը կարող է արտահայտել՝

2.1. *բուն տեղի պարագայի* քերականական իմաստ (այս դեպքում *առ* նախդիրն ունի «մոտ», «առջև», կամ «ներկայությամբ» նշանակություն), որ պահանջում են *ազանիմ, առնել, բազմական արկանել, բանակիմ, գտանիմ, դիպիմ, դնել, եմ, թողուլ, լինիմ, կամ, հանգուցանել, մնալ, ունիմ* և դադարման իմաստ արտահայտող այլ բայեր. Այժմ *առ մեզ* գտանին անբաւ զրուցաց մատեանք (Խոր., 11): *Առ նմա* թողու ոմն պարսիկ՝ զմտերիմն իւր (Խոր., 194): Կէսքն *առ նմա* իսկ էին (Եղիշէ, 43): Ուսեալ Տրդատէս *առ կոմսի* ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ (Ագաթ., 24): Մի՛ գտցի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ *առ ումեք* (Բուզ., 85): Կայր *առ* բարձր գահուն *քարին* (Բուզ., 152):

Թե՛ անձ և թե՛ իր անվանող կապվող բառածևերի հետ *առ* նախդիրը կարող է նշված քերականական իմաստն արտահայտել նաև կազմությամբ համադրական ու վերլուծական այլ բայերի (*ամբաստան լինիմ, չարախօսիմ, քսիս մատուցանել* և այլն) պահանջով, ինչպես՝ Ամբաստան եղեն *առ արքայի* (Բ Մակ., Գ, 9)[8]:....հրաւիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց՝ չարախօսել *առ արքային* Պարսից (Խոր., 346): Վասն այսորիկ սկսան քսիս մատուցանել զնմանէն *առ թագաւորին* Վարազդատայ՝ *առ* իւրում *սանուն* (Բուզ., 198) և այլն:

Բնականաբար բուն տեղի պարագայի քերականական իմաստի ձևավորմանը գերազանցապես մասնակցում են տեղ ցույց տվող հատուկ ու հասարակ և այլ թանձրացական գոյականներ նույնպես: Այս դեպքում մեծ մասամբ նկատելի է տեղանքի ոչ կոնկրետություն. Ոչ ինչ կարացեալ առնել՝ սին *առ ծովուն* կանգնէ (Խոր., 277): Դիմէ ի վերայ զօրացն Հայոց, որք *առ Մծբնին* (Խոր., 355):

2. 2. *Վերջնակետի* (ուղևորման և ուղղության[9], ուղևորության[10]) *տեղի պարագայի* քերականական իմաստ, որ գերազանցապես պահանջում են ընթացք ցույց տվող բայերը, ինչպես՝ *գալ, գնալ, երթալ, խաղալ, չուել, չու առնել, փախչիմ* և այլն: Օրինակ՝ Գնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ *առ ծովուն* Գեղամայ (Խոր.,315): Ցնծալից սրտիւ երթային *առ նմա* (Փարպ.,164): Զգո՛յշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գան *առ ձեզ*

---

[8] *Աստվածաշնչյան օրինակները բաղել ենք Հայաստանի աստուածաշնչային ընկերության (1997թ.) հրատարակությունից՝ ընդունված համառոտագրություններով:*

[9] *Տերմինը Վ. Առաքելյանինն է (տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովումների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, էջ 103):*

[10] *Տերմինը Վ. Քոսյանինն է (տե՛ս Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 234):*

հանդերձիւր ոչխարաց (Մատթ., Է.,15)[11] և այլն: Գրաբարում վերջնակետի տեղի պարագայի կիրառությունը բուն տեղի պարագայի համեմատությամբ հազվադեպ է:

2. 3. *Հանգման խնդրի* քերականական իմաստ, ինչպես՝ Եւ յոյժ մտերմութիւն ցուցեալ *առ նմա* 'մի ի հաւատարմացն նորա ցուցանիւր (Լաստ., 149): Որք *առ Արշակայն* էին միամիտք (Խոր., 299):

2. 4. *Միասնության խնդրի* քերականական իմաստ, ինչպես՝ Աստ պատմի աստէն *առ սմին* (Բուզ., 5): Որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է և օգտակար և *առ նմին* և Վրաց և Աղուանից (Փարպ., 42): Խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ մտերմութեամբ, եթէ հաստատեսցես *առ մեզ* դաշամբք զերիսս զայս (Խոր., 318):

2. 5. Ինչպես նշեցինք, *«առ* նախդիր+տրական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով կարող է արտահայտվել նաև *պատճառի պարագայի* քերականական իմաստ, որտեղ կապվող բառաձևի դեր են կատարում *անմտութիւն, քաղց, այն* և այլ վերացական գոյականներ ու դերանուններ. Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, *առ այն* զչարիսն նիւթեաց զքսութիւն (Բուզ., 103): Դուք *առ* ձերում *անմտութեան* հաղորդեցայք Հրէիցն (Բուզ., 34): Այր, ասէ, *առ քաղցի* իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ (Եղիշէ, 8) և այլն:

2. 6. Բացառիկ դեպքերում նշված մասնակաղապարով կարող է արտահայտվել *ժամանակի պարագայի* (այս դեպքում կապվող բառաձևը ժամանականիշ գոյական է), *բաղդատության խնդրի* և այլ քերականական իմաստներ ևս, ինչպես՝ Վասն այսորիկ զտեսիլ հանդերձելոցն երևեցոյց ինձ պատմել ձեզ՝ *առ ժամանակիս* զիւր կամսն առ ձեզ կատարելով (Ագաթ., 393): Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն *առ Արտաշիսի* բաղդատեալ (Խոր., 124) և այլն:

3. «*Առ նախդիր+հայցական հոլովով կապվող բառաձև*» մասնակաղապարով գրաբարում արտահայտվում են քերականական մի շարք իմաստներ: Այսպես՝

3. 1. *Մատուցանել, մատչիմ, մերձենալ, մօտիմ, յուսալ* և այլ բայերի պահանջով «*առ*+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարն արտահայտում է *հանգման խնդրի* քերականական իմաստ. Մատուցեալ *առ նա* ոմանց ի հերձուածողաց աղանդոյն Արիոսի՝ ասեն (Խոր., 294): Եւ մօտեալ *առ միմեանս* երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց և կոուէին (Փարպ., 129): Ոչ այլ իւիք է հնար մատչել *առ աստուածորդին* (Ագաթ., 208): Եւ սոքա հասին անկան ի վերայ բանակին՝ յուսացեալք *առ Աստուած* (Բուզ., 19): *Առ նա* դուք ոչ մարթայցէք մերձենալ (Ագաթ., 37) և այլն: Նշված մասնակաղապարով հանգման խնդիր կարող են պահանջել նաև *մերձ, մօտ* և այլ բայանուններ՝ Զվարսաձև բոյսս....*մօտ առ կարծինսն* այրեցուցանէ (Ագաթ., 119):

Բերված հատկապես առաջին նախադասության ընդգծված լեզվական փաստը յավագույնս ցույց է տալիս, թե ինչպես է քերականական իմաստի մթագնման հետևանքով գրաբարի նախդրային համակարգը տեղը զիջում նախադրությունների համակարգին: Հմմտ. Պատահէ նմա տեղի օթարանին *մօտ առ դիրս* սրբոյ Առաքելոյ (Խոր., 212):

Նշված մասնակաղապարով հանգման խնդիր կարող են պահանջել նաև կանչի, գրավոր կամ բանավոր դիմումի, աղոթքի իմաստ արտահայտող այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ *աղաղակել, աղօթել, գոչել, խնդրուածս առնել, կարդալ, կոչել* և այլն. *Առ աստուածապաշտսն* գոչէ մարգարէն (Ագաթ., 268): Իսկ ոմանք,....զԱւետարանն ի ձեռն առեալ, աղօթիւք *առ Աստուած* կարդային (Եղիշէ, 59): Եւ տանել ի Գաղդիոս հանդերձ երկաթի կապանօք, դնել ի մետաղս, զի աղօթեսցէ *առ Աստուած* (Խոր., 237): Զողջոյն ամիսն քաղց պահօքն և աղօթիւք առնել խնդրուածս *առ Աստուած* (Եղիշէ, 81): Գրեաց *առ գործակալս* Հռոմայեցւոց զպատճառս երթալոյն իւրոյ ի Պարսս (Խոր.,147): *Առ* իւր *աշակերտեալսն* Յեփեսոս գրէր (Փարպ., 200): Առնէր աղօթս *առ Տէր* (Բուզ., 20) և այլն: Նկատվում է, որ կապվող բառաձևի գործառույթով այստեղ հանդես են գալիս անձ անվանող գոյականներ, առավելապես՝ *Աստուած* և *Տէր* բառերը:

Այսպիսի նախդրավոր կապակցություններ են հանդիպում նաև երկկազմ և անվանական միակազմ այն նախադասությունների մեջ, որոնցում գերադաս անդամի դեր են կատարում *խնդրուածք, ողջոյն* և այլ բայանուններ. Զի իւր խնդրուածքն *առ Աս-*

---

[11] *Հմմտ. Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ ի հանդերձս գառնենիս (Լաստ., 144):*

առուած այսպէս էին լեալ (Ռուզ. 86): *Առ* այլ *մարդիկդ.* որ ընդ իմով իշխանութեամբ էր. ողջո՛յն (Ագաթ., 73): Ռազում խաղաղասէր մտօք բազմասցի ողջոյն *առ քեզ* և ամենայն մեծիս պահիդ (Եղիշէ, 28) և այլն: Նկատելի է, որ այս դեպքում ևս կապվող բառուածներ, իբրև կանոն, անձ ցույց տվող գոյական է կամ դերանուն:

Հանգման խնդրի քերականական իմաստ է ձևավորվում նաև գործողության կատարման բաշխման, ընդդիմության, հաջորդականության և այլ գաղափարներ արտահայտող կապակցությունների միջոցով, որոնց մի մասն արդեն զբաղարում վերուածվել է կայուն կապակցության կամ վերլուծական բարդության: Օրինակ՝ Երիս ընդ միոյ պատրաստեսցէ *առ մի մի ի նոցանէ* (Եղիշէ, 96): Եւ *առ մի մի ի նոցանէ* փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն (Եղիշէ, 186): Նկանակ մի *առ այր*: Պատերազմել *առ անզգամսն*[12]: Կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկիւղէ *առ* հանդերձեալ *կռիւսն* (Խոր., 290): Մէն մի բռնաքար *առ այր* հրամայէին, զի բերիցեն ընկեսցեն շեղջ կուտել (Ռուզ., 14): Եւ ըստ հողոյն թողոյր երկու երկու *առ զեղ* մի երէց և սարկաւագ (Ռուզ.,184): Ամենայն *այր առ այր* և մարդ զարմացումն յաճախէր (Ագաթ.,90): *Բան առ բան* ելույծ և իմացոյց ձեզ զօրէնս ձեր (Եղիշէ,29): Մատեան *ճակատ առ ճակատ* (Խոր.,303) և այլն:

3. 2. «*Առ* նախդիր+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարը կարող է արտահայտել նաև *մատուցման և հաղորդման խնդրի* քերականական իմաստ, որն, իբրև կանոն, առնչվում է, համապատասխանաբար, *դարձուցանել, մատնել, մատուցանել, տալ* և *ազդ առնել, ասել, լուր առնել, լու լինիմ, պատասխանի տալ* ու այլ բայերի հետ: Օրինակ՝ Մխիթարութիւն *առ արարածս* մատուցանէ (Ագաթ., 54): Ետուն *առ նա* զզուակս իւրեանց (Խոր., 282): Սա դարձուսցէ *առ նա* զաշխարհս Հայոց (Խոր., 309): Հարկ անաշխատ *առ քեզ* ոչ եկեսցեն (Խոր.,185): Բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր *առ մեզ* եկեսցէ (Ռուզ.,142): Եւ թագաւորեաց Արշակ քաջ....առ ի հաստատել բանին Տեառն՝ *առ Աբրահամ*, թէ. «Թագաւորք ազգաց ի քէն ելցեն» (Խոր., 102): Որպէս ասաց Գաբրիէլ *առ կոյսն* սուրբ, թէ ոչ տկարասցի յԱստուծոյ ամենայն բան (Ագաթ., 208): Լուր առնելով *առ որդին* իւր Պապ՝ յուսայր ապրել ի ձեռաց Շապհոյ (Խոր., 209):

3. 3. Ասացական բայերի պահանջով «*առ* նախդիր+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով կարող է արտահայտվել *վերաբերության խնդրի* քերականական իմաստ ևս. *Առ այս* ետ պատասխանի Յովսէփ և ասէ (Եղիշէ, 170): *Առ որ* այսչափ միայն ասացից (Խոր., 12): Գրեաց և գիր մի *առ այն*: Եւ ըստ մարգարէական բանին *առ նոսա* ասելոյ....զբանս սուրբս արհամարհէին (Ռուզ., 30):

3. 4. «*Առ* նախդիր+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով արտահայտվում է նաև *ներգործող խնդրի* քերականական իմաստ: Այս դեպքում, բնական է, նշված խնդիր ենթադրում և պահանջում են կրավորական սեռի բայերը: Օրինակ՝ Այլ այս եթէ *առ այլս* այլազգաբար պատմի, մի՛ ինչ սքանչանար (Խոր., 66): Քանզի պատուեալ է *առ Աստս* մոբթ կարմիր (Խոր., 179):

Անշուշտ, ընդգծված կապակցությունների միջոցով միաժամանակ արտահայտվում է *տեղի պարագայի* քերականական իմաստ, որն առավել ընկալելի է այն դեպքում, երբ տվյալ նախադասության բայ-ստորոգյալը կրավորական սեռի չէ, ինչպես՝ Այլ ինձ թուի որպէս այժմ և *առ հինսն* Հայաստանեայցս *լեալ* անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց (Խոր., 11):

3. 5. Նշված մասնակաղապարը կարող է արտահայտել նաև *սահմանափակման խնդրի* քերականական իմաստ, որ պահանջվում է հիմնականում բայանունների ու անդեմ բայաձևերի կողմից: Դրանցից են՝ *կարող, պճնող, վատ, տաղտուկ* և այլն: Օրինակ՝ *Առ ամենայն* կարող է Աստուած (Եզնիկ, 232): Զարեհ էր այր սէգ և յորս երէոց նահատակ, իսկ *առ պատերազմունս* վատ և տաղտուկ (Խոր., 184): Էր պճնող *առ հանդերձս* (Ագաթ., 71) և այլն:

3. 6. Հայցական հոլովի հետ *առ* նախդիրը հազվադեպ ձևավորում է նաև *միասնության խնդրի* քերականական իմաստ՝ Մաժակ և այլք ոչ զիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ՝ *առ Մակեդոնացւոց* պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին (Խոր., 106):

---

[12] *Օրինակը քաղել ենք Գ. Ավետիքյանի Քերականութիւն հայկական (Վենետիկ, 1815թ.) աշխատությունից (էջ 111):*

3. 7. Նշված կապակցությամբ երբեմն արտահայտվում է *բաղդատության խնդրի* քերականական իմաստ, ինչպես՝ Արդ փոքր համարիմք մեք զչարչարանս զայս *առ սէր* փոխարինին, *զոր էարկ առ ազգս* մարդկան (Եղիշէ, 148): Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զդաւս մարմնոյս *առ* մեծ *սէրն* Աստուծոյ (Եղիշէ, 186): Որպէս լոյս *առ խաւար*[13]:

3. 8. Սեռի խնդրառությամբ երկարժույթ *ունիմ (կալայ)* բայի պահանջով «*առ* նախդիր+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարը հանդես է բերում երկրորդական ուղիղ խնդրի շարահյուսական դեր: Այս դեպքում կապվող բառաձևը, իբրև կանոն, արտահայտվում է հոգնակի թվով. Սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց զքաջս *առ դիւցազունս* ունել (Եզնիկ, 122): Զձերս ի նոցանէ *առ հարս* ունէր (Եղիշէ, 196): Ոչ *առ տուտս* ունիմ զձեզ (Խոր., 357): Ոչ ինչ *առ յուս* կալեալ մեծարեաց զնա (Բուզ., 106) և այլն:

3. 9. *Առաքել, գալ, գնալ, երթալ, կոչել, հասուցանել, յղել, յուղարկիմ* և այլ բայերի հետ *առ* նախդիրը անձնանիշ բառերի հայցականով կապվող բառաձևի հետ արտահայտում է *վերջնակետի տեղի պարագայի* քերականական իմաստ[14], ինչպես՝ Ես երթամ և Զմխիթարիչն առաքեմ *առ ձեզ* (Ագաթ., 342): Ոչ կապանօք, այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց *առ ինքն* կոչել (Եղիշէ,132): Եւ տակառապետին դաւով խրատ տուեալ Հիւրկանու, զի *առ Բարզափրան* երթիցէ վասն աւերածոյ աշխարհին (Խոր., 133): Ահաւասիկ յուղարկիմք մեք ի ձէնջ *առ Աստուած* (Փարպ., 90) և այլն:

3. 10. *Բնակիմ, եմ, ընկենուլ, ժողովել, կազմել, կամ, կարգել, կուտել* և այլ բայերի հետ նշված մասնակաղապարի միջոցով գրաբարում արտահայտվում է *բուն տեղի պարագայի* քերականական իմաստ[15]: Այս դեպքում կապվող բառաձևն արտահայտվում է թե՛ անձ և թե՛ թանձրացական իր ցույց տվող գոյականով կամ դերանունով: Օրինակ՝ Կարգէր և կազմէր զճակատն.... *առ ափն* Տղմուտ գետոյն (Եղիշէ, 116): Եւ հրաման վասն երկուցն, որ անդէն ի կարաւանին *առ իրն* էին (Եղիշէ, 143): Ելեալ ի Հայս՝ զտին ժողովեալ *առ* մեծն *Սահակ* և *Մեսրոպ* զամենայն *եպիսկոպոսունս* (Խոր., 325): Կուտեալ էին *առ դուրս* (Ագաթ., 359): Կեցի *առ Կամսարականաց* (Փարպ., 187) և այլն:

3. 11. «*Առ* նախդիր+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով արտահայտվում է. *ժամանակի պարագայի* քերականական իմաստ, որտեղ կապվող բառաձևի դեր են կատարում ժամանակ ցույց տվող գոյականներ, դերանուններ ու այլ բառեր (*երբ, երեկս, ժամ, ժամանակ/ս/, յապա, վաղիւ, օր* և այլն), այլև անորոշ դերբայներ: Օրինակ՝ Օրն տարաժամէր և մօտ *առ երեկս* կարճատէր (Եղիշէ, 118): Եթէ զամենայն եղեալսն յաշտարակագործութենէ մինչև *առ մեզ* ի հասողութիւն քեզ ի մերումս ածել ջանասցուք պատմութեան (Խոր., 28): Եւ մեծն Գրիգոր *առ շրջել* ընդ աշակերտեալսն հաստատէր զնոսա ի ճշմարիտ վարդապետութեանն (Ագաթ., 465): *Առ ե՞ղբ* արարից աղօթս վասն քո (Ել., Ը, 9): Բայց զմոգուցն բազմութիւն պահել *առ օրն* հրամայեցին զգուշութեամբ (Փարպ., 63): Առ իմանալ *առ վաղիւ* անցելոց իրացն ահաւորութեան նշանակ (Բուզ., 16): Անձանօթ ևս լինէր *առ յապա* մարդկան Աստուծոյ բարերարութիւնն (Եզնիկ, 56) և այլն:

3.12. Նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև *պատճառի պարագայի* քերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառաձևի դեր են կատարում վերացական առարկա ցույց տվող բառեր՝ *գութ, ինչ, նախանձ, սէր, ցաւ* և այլն. Իսկ նոքա *առ սէրն* Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանս վասն մեծի յուսոյն (Եղիշէ, 21): *Առ ի՞նչ* է քո այդ մեծ տրտմութիւնդ (Եղիշէ, 42): *Առ նախանձ* թշնամւոյն բանսարկուին հրապոյրք ցոփացուցիչք մտին յաշխարհ (Ագաթ., 44): *Առ ցաւս* իւր ճչիցէ (Ագաթ., 321): *Առ* ձեռաց *կորովութենն* զնիզակն ընդ քերան արկանէր զօրավարին Մանուէլի (Բուզ., 204) և այլն:

Նշված քերականական իմաստն արտահայտվում է նաև *առ* նախդրի և անորոշ դերբայի կապակցությամբ, ինչպես՝ *Առ չժուժալ* սրտիցն բարկութեան քակեալ որոշն-

---

[13] *Օրինակը քաղել ենք Ա. Բագրատունու Տարերք հայերէն քերականութեան դպրատանց տղայոց համար (Վենետիկ, 1846թ.) աշխատությունից (էջ 51):*
[14] *Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 230:*
[15] *Հմմտ. անդ, էջ 230-231:*

ցան ի նախարարացն (Եղիշէ,): Եւ արդ, պատմեցի ձեզ ոչ միայն *առ ննջել* սրտիս (Փարպ., 37):

3.13. «*Առ* նախդիր + հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով արտահայտվում է նաև *նպատակի պարագայի* քերականական իմաստ: Ընդ որում՝ ա) կապվող բառաձևի դերով հաճախ հանդես են գալիս անորոշ դերբայներ, հազվադեպ՝ վերացական գոյականներ, բ) նշված քերականական իմաստն արդեն V դ. գրաբարում գեբազանցապես արտահայտվում է *առ* և *ի* նախդիրների միաժամանակ կիրառությամբ: Օր.՝ *Առ փո՞րձ* ինչ եկեալ հարցանես ցմեզ (Եղիշէ,195): Այնու երևեցի նշանակ բազմութեանն՝ *առ իմանալ* առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութեան նշանակ (Բուզ., 14):

3.14. Նշեցինք, որ գրաբարում *առ* նախդրի հետ ավելի հաճախ կիրառվելու և լրացյալի պահանջով քերականական բազմաթիվ իմաստներ արտահայտելու տեսանկյունից աչքի է ընկնում հայցական հոլովը: Նշված գործընթացի արդյունքում, որը, անշուշտ, սկսվել է դեռ V դարից էլ առաջ, արդեն V դարում վկայվում են «*առ*+ հայցական» մասնակաղապարով բազմաթիվ կապակցություններ, որոնք հարստացնում են գրաբարը վերլուծական բարդությունների և կայուն արտահայտությունների մի մեծ խմբով[16]: Վերջինիս մի մասը անփոփոխ կամ մասնակի փոփոխություն կրած հասել է մինչև մեր օրերը, մյուսները լեզվի պատմության հետագա ընթացքում դուրս են մնացել բառապաշարից՝ պայմանավորված այս կամ այն հանգամանքով: Լեզվական այդ միավորներն հիմնականում ունեն մակբայական նշանակություն: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ «*առ*+կապվող բառաձև» կապակցությունները, ներունակ լինելով կատարելու առաջին հերթին բայական անդամի լրացման շարահյուսական գործառույթ, ինչ խոսք, հիմնականում պետք է լրացնեին հենց բայի հետ անմիջականորեն կապված խոսքի մասի՝ մակբայի շարքերը: Այդպիսի նախդրավոր կապակցություններ են՝ *առ ժամ մի, առ ժամայն, առ ժամանակ մի, առ ժամանակս, առ հասարակ*[17], *առ ձեռն, առ (յ)ապայն, առ յապա, առ ի յապա, առ յապայսն, առ սակաւ սակաւ, առ այս նուագ, առ մի նուագ, առ այժմ, առ երի* («զուգընթաց», «առընթեր»), *առ երեկս, առ աչս, առ աքուր, առ անգամ մի, առ ընթեր, առ գամ* (*մի*), *առ ի՞մ, առ ի բաւալ, առ դիպան, առ մի., առ վաղիւն, առ հարկի, առ վայր մի, առ ոտս, առ յանդիման, առ փոքր փոքր, առ կուռն* և այլն: Օրինակ՝ Բանիւք կամակորացն վարիմք *առ ժամ մի* (ՆԲՀԼ, հ. Ա-Կ, էջ 826, ԺԱՄ բառահոդվածում): Եւ *առ ժամայն* ամենայն քեզ եղիցին ասացեալ (Խոր., 88): Բուսանին մարմինք նոցա առ ժամանակ մի (Ագաթ., 68): *Առ ժամանակ մի* վասն այսց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի (Եզնիկ, 75): *Առ ժամանակս* վայելեն ի դարմանոյ ցորենոյն (Բուզ., 116): Գիտելութիւն իրաց *առ ի յապա* եղելոյս (Փարպ., 28): Շատ աւելի *առ ի յապայսն* բերէ քեզ շահ (Փարպ., 14): *Առ սակաւ սակաւ* աճէ ի նա լոյսն (Եզնիկ, 201): Բայց *առ այս նուագ* կամ էր, թէ ներէիք ինձ (Փարպ., 175): Որպեսզի *առ մի նուագ* խորդորեալ լիցի այս սրբոյն (Ագաթ., 396): Մեք *առ այժմ* ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն (Եղիշէ, 194): Պարտի *առ երի* ընթանալ եօթանասնիցն աւանդութեան (ՆԲՀԼ, հ. Ա-Կ, էջ 683, ԵՐԻ բառահոդվածում): *Առ երեկս* բաշխեսցէ կերակուրս (Ծննդ., ԽԹ, 27): Ծառա՛յք, հպատա՛կ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց-մի՛ սուտակասպասք եւ *առ աչս* աչառելով, այլ սրտի մտօք ծառայեցէ՛ք (Եղիշէ, 11): *Առ աքուր* կոխան առնէիր զգեստս քո (Եզեկ., ԼԲ, 2): Պատառոտուն հանդերձիւն պատէր զսուրբսն *առ անգամ մի* (Ագաթ., 117): *Առ ընթեր* նմա զհիւղն դնեն (Եզնիկ, 25): Զպատուիրազանցութիւնն գործեցի *առ գամ մի* (Բուզ., 85): Զի *առ գամ* միայն աքսորելով ապրեսցի (Բուզ., 90): Եթէ ի տանջանաց կասկած չիցէ, ապաշխարութիւն *առ ի՞մ* իցէ (Եզնիկ, 289): Ի կողմանէ դռյզն ելք էին *առ ի բաւալ* (Խոր., 314): Երկու խարիսխ *առ մի* սիւն (Ել., ԻԶ, 19): Ոչ թոյլ տայր նոցա խօսել *առ վայր մի* առանց զայրոյ ոտոխին ի դուռնն (Փարպ.,23): Բերեալ դնէին *առ ոտս* երանելեացն (Փարպ.,106):

3.15. Մի շարք դեպքերում «*առ* նախդիր+հայցական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարի հետ մի կայուն կապակցություն է ձևավորում նրանց՝ բայով արտահայտված լրացյալը: Այդպիսի կապակցություններ են, օրինակ, *առ ոչինչ համա-*

---

[16] *Ա. Այտընյանը և ուրիշ քերականներ ու լեզվաբաններ դրանք անվանում են ոճեր:*

[17] *Բուզանդի երկում, օրինակ, «առ հասարակ» կապակցությունը հանդիպում է 71 անգամ, Ագաթանգեղոսի երկում՝ 47 անգամ:*

րիմ, առ ոտն հարկանել և այլն՝ Մի զուխտ Աստուծոյ *առ ոտն կոխիցեն* (Բուզ., 265): *Առ ոտն հարին* զմեծ քահանայութեան զԱստուծոյ պատիւն (Բուզ., 3): Զլուսաւորացդ զորութիւն.... *առ ոչինչ համարին* (Ագաթ., 87) և այլն:

3.16. Տասնյակ դեպքերում էլ *առ* նախդիրը հանդես է գալիս կրկնավոր բարդությունների կազմում, ինչպես՝ *բան առ բան, խիտ առ խիտ, մէտ առ մէտ, մթեր առ մթեր, յապա առ յապա* և այլն: Օրինակ՝ *Բան առ բան* ելոյծ և իմացոյց ձեզ զօրէնս ձեր (Եղիշ., 29): *Խիտ առ խիտ* թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ (Եղիշէ, 12): Ի թանձրութենէ անկեալ դիականց *մօտ առ մօտ* խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց (Եղիշէ, 118): *Յապա առ յապա* յորժամ գայցէ, բերիցէ ինքն տալ մեզ զիւրոց փառացն զանմահութիւնն և զանեղծութիւնն (Բուզ., 72) և այլն:

4. *«Առ նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև»* մասնակաղապարը գրաբարում առանձնանում է թե՛ կիրառական և թե՛ քերականական իմաստների սահմանափակությամբ: Բավական է նշել, որ V դ. հայ պատմիչների և Եզնիկ Կողբացու երկերում դրանց ընդհանուր թիվը մեկ ու կես հարյուրից չի անցնում: Այսուհանդերձ *«առ* նախդիր + բացառական հոլովով կապող բառաձև» մասնակաղապարով գրաբարում կարող է արտահայտվել՝

4.1. *անջատման խնդրի* քերականական իմաստ, որ ենթադրվում է համապատասխան իմաստակիր բայերի ու բայանունների կողմից: Օրինակ՝ Եւ ընդէ՞ր սա գիտակ հրոյ և կամ Պրոմեթէոս գողացեալ *առ ի յաստուածոցն* գհուր և շնորհեալ մարդկան (Խոր., 27): Ոչ տկարասցի *առ ի յԱստուծոյ* ամենայն բան (Ագաթ., 208): Հաւատամք և ի սուրբ Հոգին....բղխումն մշտնջենաւոր *առ ի Հօրէ* (Ագաթ., 473): Եւ յայտնեալ նոցա գելսն *առ ի Հօրէ* և զդարձն ի նոյն (Ագաթ , 227) և այլն:

Նկատենք, որ անջատման խնդրի քերականական իմաստի ձևավորման համար կապվող բառաձևի դերով հանդես են գալիս հիմնականում անձ ցույց տվող գոյականներ, իսկ իր ցույց տվող (գերազանցապես՝ տեղանիշ) գոյականները նման դեպքում *առ* նախդրի հետ ձևավորում են սկզբնակետի տեղի պարագա: Հմմտ. «Զի որոց եկեալ *առ ի կուսէն* ոչ ծանուցեալ՝ թերևս յորժամ առ *ի գերեզմանէն* գայցէ, դիմեսցեն անկանել յարքայութիւնն» (Ագաթ., 239) նախադասության ընդգծված անդամները, որոնցից առաջինը անջատման խնդրի քերականական իմաստ է արտահայտում, իսկ երկրորդը՝ տեղի պարագայական:

4.2. *Ներգործող խնդրի* քերականական իմաստ, որտեղ լրացյալը կրավորական, մասնակի դեպքում՝ չեզոք սեռի բայ է՝ *Առ ի մէջ* կախեցաւ (Ագաթ., 323): Գրելոցս *առ ի մէջ* տեղեկացեալք (Ագաթ., 11): Զհրաման....կալ....ի հաստատութիւն հաւատոցն, զոր *առ ի Տեառնէ* տարածանէր (Ագաթ., 457): Պարգևաբաշխութիւն....*առ ի մէջ՝* կացցէ (Ագաթ., 431): Կամսարականն Արշաւիր,....վաղվաղակի հաւանեալ *առ ի նմանէ* հրամանին, զկնի նաւավարացն և փախստէիցն նետաձիգ լինէր (Փարպ., 66): Վերահասու եղաք գրելոյս *առ ի քէն* (Խոր., 335) և այլն:

Բերված նախադասություններից մի քանիսի կազմում ներգործող խնդիր պահանջող բայը ավելի քան հասկանալի լինելու պատճառով զեղչվել է: Նմանատիպ կառույցների մեջ *«առ* նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարն ունի նաև հատկացուցչի քերականական նրբիմաստ, ինչպես՝ Զայս արձան բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք որպէս *զառ ի յաստուածոցն* գործ (աստվածների կողմից ստեղծված գործ=աստվածների գործ) (Խոր., 119): Եւ չն նս գիտելով *զառ ի նմանէ* դավաճանութիւնն (նրա կողմից կատարված դավաճանությունը=նրա դավաճանությունը)....(Խոր., 79):

4.3. Տեղ ցույց տվող, ինչպես նաև թանձրացական գոյականների և այլ բառերի հետ *առ* նախդիրն արտահայտում է *սկզբանակետի տեղի պարագայի* քերականական իմաստ: Օրինակ՝ Թերևս յորժամ *առ ի գերեզմանէն* գայցէ, դիմեսցեն անկանել յարքայութիւնն (Ագաթ., 239): Հանցուք *առ ի ծառոյն* կենաց, զի մի կեցցէ յաւիտեան (Ագաթ., 148): Զի եթէ ամպքն....*առ ի ներքոյս* մատռուակեն....(Ագաթ., 284):

4.4. «*Առ* նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով կարող է արտահայտվել *պատճառի պարագայական* իմաստ, որտեղ կապվող բառաձևի դերով հանդես են գալիս մի շարք գոյականներ և անորոշ դերբայներ: Հատկանշական է, որ պատճառի պարագայի ձևավորմանն այս դեպքում կարող են մասնակցել

նաև թանձրացական գոյականներ: Օրինակ՝ *Առ ի* յոյժ թանձր ամկեալ *դիսկանցն* իբրև քարակոյտս դերբկաց երևէին (Եղիշէ, 118): Նոյնպէս և պառնկութիւնք *առ ի չկալոյ* ի սահմանս ամուսնութեանն (Եզնիկ, 81): Անդ էր տեսանել....գաղէտս անբաւ տուրուկուսանացն երկոցունց կողմանցն՝ *առ ի յանդուգն* յարձակմանէն զմիմեանս բախելով (Եղիշէ, 117) և այլն:

4.5. Նշված մասնակաղապարով ավելի հաճախ արտահայտվում է *նպատակի պարագայի* քերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառաձևի դերով հիմնականում հանդես են գալիս անորոշ դերբայների թեք ձևեր՝ առանց իմաստային և քերականական առանձնահատկությունների սահմանափակման: Օրինակ՝ Արարեալ նշանս *առ ի հաստատելոյ* զնոսա (Ագաթ., 245): Յերկարակեաց արարեալ *առ ի պատմելոյ* ազգացն եկելոց զհամաշխարհական բարկութեանն պայման (Ագաթ., 155): Զի մի մեծ ինչ նախճիրս որոյ կոտորել *առ ի ցոյցս առնելոյ* (Բուզ., 44) և այլն:

4.6. «*Առ* նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարը մի շարք դեպքերում ունի դարձվածքային արժեք, ինչպես՝ *առ ականէ* («ասերես»), *առ օրինակէ, առ առակէ, առ յիշատակէ, առ պատճառէ* և այլն: Օրինակ՝ իսկ նա *առ* նուրա *ականէ* գնաց ընդ նոսա (Բուզ., 260): Եւ զհետ մտանելով զօրացն Պարսից *առ պատճառէ*, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան (Խոր., 211) և այլն: Այսպիսի դեպքերում *ի* նախդիրը սովորաբար դուրս է մնում:

5. «*Առ նախդիր+գործիական հոլովով կապվող բառաձև*» մասնակաղապարով արտահայտվում են թե՛ խնդրային, թե՛ պարագայական իմաստներ, որոնցից գործառական ակտիվությամբ և քերականական իմաստների բազմազանությամբ աչքի են ընկնում տեղի պարագաները: Նշված մասնակաղապարով կարող է արտահայտվել՝

5.1. *բաղդատության խնդրի* քերականական իմաստ, ինչպես՝ Սակայն *առ* համարձակապէսն *յանդգնութեամբն*....իբրև զոչինչ թուին ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց և թեթևութիւն (Փարպ., 98): Զի՞նչ է յարդ *առ ցորենով* (Երեմ., իգ, 28): Ոչ *առ* այլովք *վատթարօքն* վեհ երևի, այլ ի վերուստ՝ յերկնուստ ունի զանսուտ օրէնդրութիւնն (Եղիշէ, 29) և այլն:

5.2. *Միասնության խնդրի*, այլև *պարագայի* քերականական իմաստներ: Օրինակ՝ *Առ որով* տեսանեմ և զայս (Խոր., 6): *Առ այսոքիւք* և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան (Խոր., 10): Իսկ *առ այսոքիւք* և առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն (Խոր., 56): Պարգևէ նմա Արտաշէս զմասն արքունի....և զՈւղտու ակունսն և առ այսոքիւք և զաւարն ամենայն նմա թողու (Խոր., 183) և այլն:

5.3. *Տեղի պարագայի* զանազան նրբիմաստներ՝ դառնալով՝

5.3.1. *բուն տեղի պարագա*, որ պահանջում են դադարի իմաստ արտահայտող և այլ բայեր: Այս դեպքում կապվող բառաձևի դեր են կատարում թե՛ անձ և թե՛ թանձրացական իր ցույց տվող գոյականներ: Օրինակ՝ Եւ եղին զնա *առ եկեղեցեաւն* (Բուզ., 15): Յաղթէր ախոյանին *առ եպիսկոպոսին* Եւսեբիւ (Բուզ., 60): *Առ եզերքն* Ղեկովք գետոյ արարեալ զիւր զօրու բանակատեղս (Փարպ., 3): Զորդիս իւրեանց և զոստերս պատուիրէին ստէպ դաստիարակացն չանցուցանել երբեք *առ նոքօք* մօտ (Փարպ., 60): Եւ անտառ *առ* Ազատ *գետովն* տնկէ (Խոր., 265): Սայլորդացն տեսեալ ոսկերս մարդկան գազանակուր եղելոց, ցրուեալս *առ եզերք* փոսոյն (Խ. 296): *Առ սահմանօքն նոցա*.... պատանիք ոմանք իբր *առ երիտասարդութեօք* ճեմէին (Խոր., 39) և այլն.

5.3.2 Նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև *անցման տեղի պարագայի* քերականական իմաստ: Այս դեպքում լրացյալի դերով հանդես են գալիս *անցանել, գալ, գնալ, դառնալ, երթալ, շահատակել* և բազմաթիվ այլ բայեր: Օրինակ՝ Արեգակն.... ցերեկ *առ հարավակողմամբ* գնայ ընդ արևմուտս (Եզնիկ, 189): Ինքն ծագեալ անդ գնայ *առ հարավով* և պատի *առ հիւսիսեաւ* (Եզնիկ, 189): Դառնայ *առ ստորոտովն* Պարխարայ ընդ մէջ Տայոց (Խոր., 108): Երբեմն սոյն Յոհան անցանէր *առ այգեօք* ուրումն (Բուզ., 276):

5.3.3. Մի շարք բայերի պահանջով (ինչպես՝ *հանել, հասանել, փախստական առնել* և այլն) *առ* նախդիրը գործիականի հետ արտահայտում է *վերջնակետի տեղի պարագայի* քերականական իմաստ: Օրինակ՝ Փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն *առ* խորագոյն *դարիւքն* Լոփնաս գետոյ (Ագաթ., 76): Հասանէ *առ սահմա-*

ճօրն խաղտեաց (Խոր., 106): Գայր հասանէր *առ ստորոտով* Նպատական լերինն (Ագաթ., 427): Եկեալ հասանէր... *առ սահմանօք* Նոր Քաղաքին (Կոր., 50) և այլն:

5.3.4. Բացառիկ դեպքում նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև *սկզբնակետի տեղի պարագայի* քերականական իմաստ, որ կարող են ենթադրել գործողության սկիզբ անվանող բայերը: Օրինակ՝ Քարոզեաց ի Կղարջաց՝ սկսեալ *առ դրամբք* Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց (Խոր., 234):

5.4. «*Առ* նախդիր+գործիական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով արտահայտվում է նաև *ժամանակի պարագայի* քերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառաձևի դեր են կատարում ժամանակ, իրադարձություն կամ անձ անվանող վերացական և թանձրացական գոյականներ, այլև որոշ դերանուններ: Օրինակ՝ Ահա որ ինչ *առ* մերով *ժամանակաւս* եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ գրուցեցից քեզ անսխալ (Խոր., 257): *Առ որով* նախնին մեր Հայկ (Խոր., 27): Հարկ աշխարհին բազմագոյն քան *առ հարբն* նորա երեքայր յարքունիս (Եղիշէ, 58) և այլն:

5.5. «*Առ* նախդիր+գործիականով կապվող բառաձև» մասնակաղապարը որոշ դեպքերում վերածվել է դարձվածքային միավորի, ինչպես՝ *առ ոտիւք*, *առ աչօք* և այլն: Օր.՝ *Առ աչօք* ինչ իցէ (Մատթ., ԺԳ, 26): Կինն ննջէր *առ ոտիւք* նորա (Հռութ, Գ, 8) և այլն:

Առ նախդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, կարողանալով կապակցվել բոլոր թեք հոլովների հետ, աչքի է ընկնում խնդրային ու պարագայական ամենատարբեր քերականական իմաստներ ձևավորելու օժտվածությամբ: 5-րդ դարում այն ավելի հաճախ հանդես է գալիս հայցական հոլովի հետ՝ հենց վերջինիս հետ միասին էլ արտահայտելով ամենաշատ քերականական իմաստները: Գրաբարյան *առ* նախդիրը այնքան է ակտիվ, որ զուգահեռաբար կարող է արտահայտել այլ նախդիրների մասնակցությամբ ձևավորվող քերականական իմաստներ ևս: Քերականական որոշ իմաստներ էլ *առ* նախդիրը ձևավորում է *ի* (*յ*) նախդրի հետ միասին: Նկատելի է, որ *առ* նախդիրն արդեն V դարում մասնակցում է նաև բառակազմական գործընթացին՝ բազմաթիվ բառային միավորների կազմում կատարելով բառաբաղադրիչի դեր:

Համառոտագրություններ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Բուզ. – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզնիկ - Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղիշէ – Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Լաստ. - Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912:
Խոր. – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Կոր. – Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
ՆԲՀԼ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.Ա-Կ, Վենետիկ, 1836, հ.Հ-Ֆ, Վենետիկ, 1837:
Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ПРЕДЛОГ ԱՌ ГРАБАРА В НЕОПУБЛИКОВАННОЙ РАБОТЕ ПРОФ. ВАРАГА АРАКЕЛЯНА "ПРЕДЛОГИ ГРАБАРА"

Резюме — *Г. Хачатрян*

Изучение предлога *առ* свидетельствует о том, что ему свойственно в сочетании со всеми косвенными падежами выражать разнообразные грамматические значения дополнения и обстоятельства. В V веке чаще всего для выражения этих значений предлог *առ* выступал в сочетании с винительным падежом. Данный предлог в грабаре был чрезвычайно активен, и, наряду с указанными значениями, мог также участвовать в формировании грамматических значений, выражаемых другими предлогами. Некоторые грамматические значения предлог *առ* выражал в сочетании с предлогом *ի* (*յ*):

В V веке предлог *առ* выявляет способность участвовать в процессе словообразования, выполняя функцию словообразовательного аффикса.